Արձանագրություն N 4

Երևան քաղաքապետարանի կարիքների համար մարզական համալիրի ստեղծման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/45» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման արտահերթ նիստ

ք. Երևան

13.04.2020թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գուլգուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Այվազյան /գնահատող/, Ե. Մատասյան /գնահատող/, Ե. Բաղդասարյան /բացող/, Ա. Մարգարյան/բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1.Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Վ. Գուլգուլյան)

1.1 Հաշվի առնելով, որ ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հավասար են՝ ընտրված մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված մասնակիցների հետ կանցկացվի գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

1.2 Ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց բանակցությունները անցկացնել հեռահար կապի միջոցներով, միաժամանակ: Բանակցությունների հեռահար անցկացման ձևը նախօրոք կհամաձայնեցվի մասնակիցների հետ:

1.3 Գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների կիրականացվեն 17.04.2020թ. ժամը 15:00-ին:

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Վ. Գուլգուլյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 17.04.2020 թվականին ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Վ. Գուլգուլյան
Անդամներ՝ ---------- Ռ. Այվազյան
---------- Ե. Մատասյան
---------- Ե. Բաղդասարյան
---------- Ա. Մարգարյան
Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան